

## ՏԵՂԵԿԱՆՔ

### ԼԵԶՎԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ՝ 2016 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ- ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ԵՎ ՕՏԱՐԱՏԱՌ ԶԵՎԱՎՈՐՄԱՄԲ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԳՐՎԱԾՔՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Կառավարության 30.07.2015թ. N839-Ա որոշման համաձայն՝ ՀՀ ԿԳՆ լեզվի պետական տեսչությունը 2015 թվականի օգոստոսի 1-ից ստուգումներ և վարչական վարույթներ չի իրականացնում: Այդ բացը լրացնելու նպատակով 2016 թվականին կատարել է ուսումնասիրություններ և մշտադիտարկումներ՝ ձեռնարկելով կանխարգելիչ միջոցառումներ մայրաքաղաքում և հանրապետության որոշ մարզերում: Միայն 2016 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ՀՀ լեզվի պետական տեսչությունը Երևան, ինչպես նաև Այունիքի մարզի Գորիս, Կապան և Կոտայքի մարզի Հրազդան, Չարենցավան, Ծաղկաձոր քաղաքներում գույքագրել է լեզվական օրենսդրության պահանջների խախտմամբ ձևավորված հրապարակային գրվածքները, կատարել լեզվավիճակի դիտարկում և նախնական վերլուծություն: Կանխարգելիչ գործողություններ կատարելու նպատակով, համագործակցելով նշված մարզերի համայնքապետարանների հետ, տնտեսավարողներին պարզաբանվել է լեզվի բնագավառը կարգավորող օրենսդրությունը:

Նրանք տեղեկացվել են նաև, որ տվյալ աշխատանքն այս փուլում իրենց համար չի առաջացնում որևէ իրավական հետևանք:

Տեսչության աշխատակիցները շրջայց են կատարել Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ամիրյան, Սարյան, Ալեք Մանուկյան, Իսահակյան, Մոսկովյան, Հանրապետության, Նալբանդյան, Թումանյան, Բաղրամյան, Աբովյան, Պուշկինի, Կորյունի, Սայաթ-Նովայի փողոցներում, Մաշտոցի պողոտայում, Մալաթիա-Սեբաստիա, Դավթաշեն վարչական շրջաններում: Երևան քաղաքում գույքագրել է ոչ հայերեն ձևավորված 230 հրապարակային գրվածք, Գորիս և Կապան քաղաքներում, համապատասխանաբար, 48 և 57, Հրազդան քաղաքում՝ 28, Չարենցավանում՝ 44, Ծաղկաձորում՝ 57 հրապարակային գրվածք:

Երևանում և հիշյալ քաղաքներում ընդհանուր հաշվով գույքագրված ոչ հայերեն ձևավորմամբ 464 հրապարակային գրվածքից միայն օտարալեզու և (կամ) օտարատառ ձևավորմամբ է 271-ը:

Գորիս քաղաքում «Լեզվի մասին» ՀՀ օրենքի կիրարկման հետ կապված հարցերը քննարկվել են համայնքի ղեկավարի, աշխատակազմի քարտուղարի, ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետի, իսկ Կապանում՝ աշխատակազմի քարտուղարի հետ: Հրազդան, Չարենցավան և Ծաղկաձոր քաղաքներում տվյալ հարցերը քննարկվել են համայնքապետարանների համապատասխան աշխատակիցների հետ:

Նշենք, որ նախկինում տեսչությունը համանման աշխատանք կատարել էր Կապանում՝ համագործակցելով Սյունիքի մարզպետարանի հետ: Փորձը ցույց տվեց, որ այդպիսի աշխատանքը բավական արդյունավետ է. քաղաքում վերացվել են բազմաթիվ խախտումներ:

Նշված իրավախախտումների մեջ տնտեսավարողների կողմից հիմնականում վիճարկելի է եղել ապրանքանիշները նաև հայերեն տառադարձմամբ գրելու հարցը: Հաճախ քննության առարկա է եղել նաև հրապարակային գրվածքների ցուցանա՛կ, թե գովազդ լինելու հարցը, որի վերաբերյալ տեսչությունը տվել է թե՛ գրավոր, թե՛ բանավոր պարզաբանում:

Հիշյալ խախտումների մեջ չեն ներառվել զգալի տոկոս կազմող այն հրապարակային գրվածքները, որոնք թեև ձևավորված են հայատառ, բայց հայերեն չեն: Այլ կերպ ասած՝ թարգմանվող միավորները ոչ թե հայերեն թարգմանվել են, այլ տառադարձվել են: Օրինակ՝ «Մարկետ», «Սուպերմարկետ» «Գուդ ֆիշ», «Ֆեյշն ստուդիո», «Գուդ շոփ», «Ունո շուգ», «Քուին քեյք», «Մեյդ թու մեյք» և այլն:

Կատարված ուսումնասիրությունների և մշտադիտարկումների արդյունքում կազմվել են օտարալեզու ցուցանակներ ունեցող կազմակերպություններին հասցեագրված իրազեկման թերթիկներ (թվով 129) և հանձնվել հասցեատերերին: Իրազեկման թերթիկներ են տրվել այն տնտեսավարող սուբյեկտներին, որոնց գործող օբյեկտների հրապարակային գրվածքների լեզվական ձևավորումը չի համապատասխանում «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի պահանջներին, ըստ որի ՀՀ պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները պարտավոր են ցուցանակները, ձևաթղթերը, դրոշմանիշները, նամականիշները, կնիքները, միջազգային փոստային ծրարները, գովազդի բոլոր միջոցները ձևավորել հայերեն՝ անհրաժեշտության դեպքում զուգակցելով այլ լեզուներով: Տնտեսավարող սուբյեկտներն իրազեկվել են նաև

ցուցանակները ոչ հայերեն ձևավորելու համար ՎԻՎ օրենսգրքով նախատեսված պատասխանատվության մասին:

Հանդիպել են օրենսդրության խախտման հետևյալ դեպքերը.

ա) օտարալեզու և (կամ) օտարատառ ձևավորմամբ հրապարակային գրվածքներ, որոնք տեղեկույթ են պարունակում միայն ապրանքային նշանի մասին,

բ) հրապարակային գրվածքում տվյալ տնտեսվարող սուբյեկտի գործունեության բնույթը նշող լեզվական միավորը միայն օտարալեզու է.

գ) հրապարակային գրվածքը պարունակում է միայն օտարատառ որևէ անուն կամ անվանում (ոչ ապրանքանիշ):

Որքան էլ տարօրինակ է, որոշ տնտեսվարող սուբյեկտներ հրաժարվել են այդ թերթիկներն ստանալուց՝ պատճառաբանելով, թե իրենք օրենքի որևէ պահանջ չեն խախտել: Մի քանի տնտեսվարողների էլ դրանք չեն տրվել, որովհետև գույքագրում կատարելուց հետո նրանք փոխել են ոչ հայերեն ձևավորված հրապարակային գրվածքները կամ դադարեցրել իրենց գործունեությունը:

Մի շարք, մասնավորապես՝ «Ալֆա-Ֆարմ», «Ռոսգոսստրախ», «Ղ-տելեկոմ», «Ինտեր լոտո», «Կոնվերս բանկ», «Գուդվին-Բետ», «Մոբլիուս», «Բեներիկ», «Ամերիաբանկ», «Գրիտտի», «Յուքոմ» ընկերությունների ղեկավարները ներկայացրել են գրավոր առարկություն՝ չընդունելով, որ կատարել են իրավախախտում: Նրանց բոլորին մեկ անգամ ևս ներկայացվել են օրենքների համապատասխան դրույթները, պարզաբանվել լեզվական օրենսդրության պահանջները:

Մինչև տարեվերջ շրջայցեր են նախատեսված Գյումրի, Աբովյան, Արտաշատ քաղաքներում:

Հավելենք, որ վերջին շրջանում համագործակցված աշխատանք ենք իրականացրել նաև Երևանի քաղաքապետարանի հետ: Վերջինս իրավասություն ունի «Լեզվի մասին» ՀՀ օրենքի պահանջը չկատարելու դեպքերում ապամոնտաժել ցուցանակները և գովազդային վահանակները, ինչն էլ արվում է: